Այս բոլոր տվյալները փաստում են հասուն անհատների և ձագերի Մոխրագույն կռունկի մյուս ենթատեսակներից տարբերվելու մասին և վկայում են, որ այն սկզբունքորեն նոր ենթատեսակ է:

բոլորին հոգատար լինել մեր բնության և թռչունների հանդեպ:

Հայտնաբերված նոր ենթատեսակը՝ Grus grus archibaldi - ն, այժմ բնադրում և հանդիպում է Հայաստանի միայն հյուսիս-արևմտյան շրջաններում՝ Արփի լճի տարածքին հարող շրջակայքի ճահճուտներում և խոնավ մարգագետիններում, ինչպես նաև Վրաստանի Ջավախեթի շրջանում և Թուրքիայի Կարս նահանգում: Իր լատիներեն անվանումը՝ Grus grus archibaldi, նոր ենթատեսակը ստացել է ի պատիվ հայտնի կենսաբան և մեծանուն բնապահպան Ջորջ Արչիբալդի, որն իր ամբողջ կյանքը նվիրել է կռունկների ուսումնասիրությանն ու նրանց պահպանմանը:

Հայաստանի Թռչունների Պահպանման Միությունը շարունակում է հայտանաբերված նոր ենթատեսակի փոքր պոպուլյացիայի ուսումնասիրությունները և կոչ է անում բոլորին հոգատար լինել մեր բնության և թռչունների հանդեպ:

Սույն թերթոնը տպագրվել է ՄԱԶԾ ԳԷՀ Փոքր դրամաշնորհների ծրագրի և Van Tienhoven հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ

Հայաստանի Թռչունների
Պահպանման Միություն (ASPB)

ՀՀ ք. Երևան, 0014 Պ. Սևակի 7
հեռ. / ֆաքս՝ + 374 10 20 87 25
էլ. փոստ՝ armbirds@yahoo.com.
էլ. կայք՝ www.aspbirds.org

Մոխրագույն Կռունկ Տարվա թռչուն

2010

Մոխրագույն կռունկ *(Grus grus archibaldi)*

Մոխրագույն կռունկը խոշոր թռչուն է `երկարությունը՝ 110-120 սմ, իսկ թևերի բացվածքը ՝ 220-245 սմ: Տարածված է հյուսիսային և արևմտյան Եվրոպայում, Ռուսաստանի տարածքի մեծ մասում, հյուսիսային Մոնղոլիայում, Չինաստանում, ինչպես նաև փոքր թվաքանակով բնակվում է Տիբեթում, Թուրքիայում, Վրաստանում: Ձմռանը չվում է դեպի Իսպանիա, Ֆրանսիա, հյուսիսային և արևելյան Աֆրիկա, Մերձավոր Արևելք, Հնդկաստան, ինչպես նաև Չինաստանի հարավային և արևելյան շրջաններ: Մոխրագույն կռունկը բնադրվում է կիսաանապատներում՝ խոնավ և ճահճոտ տարածքներում, հաճախ ցանքադաշտերի և մարգագետինների հարևանությամբ:

Հայաստանում Մոխրագույն կռունկը բնադրող չվող թռչուն է: Բնադրում է միայն Շիրակի մարզում `Արփի լճի շրջակայքում, իսկ չուի ժամանակ նրան կարելի է հանդիպել Հայաստանի այլ շրջաններում:

Մոխրագույն կռունկները շատ հավատարիմ են և զույգեր կազմում են ողջ կյանքի համար: Հիմնականում դնում են երկու ձու: Ձագերի խնամքը իրականացնում են երկու ծնողներն էլ հավասարապես: Հետաքրքիր է այն փաստը, որ նախքան ձվադրումը ծնողները իրենց փետուրները ծածկում են ցեխով, որպեսզի բնադրման շրջանում հնարավորինս աննկատ լինեն:

Կռունկները ամենակեր են՝ կախված կերի բազմազանությունից սնվում են բույսերով և սերմերով, անողնաշարարորներով `միջատներով և թրթուրներով, ինչպես նաև այնպիսի ողնաշարավոր կենդանիներով, ինչպիսիք են՝ օձերը, ձկներն ու կրծողները:

Ցավոք ամբողջ աշխարհում Մոխրագույն կռունկի թվաքանակը կտրուկ նվազում է, որը հիմնականում պայմանավորված է նրանց կենսամիջավայրի ոչնչացման հետ, իսկ Հայաստանում այս վտանգին ավելանում է նաև մարդու կողմից անմիջապես հետապնդումն ու որսագողությունը, ինչը լիովին վտանգում է կռունկի գոյությունը մեր երկրում: Մոխրագույն կռունկը գրանցված է Սիտես-ի ցուցակում և ՀՀ Կարմիր Գրքում:

Մոխրագույն կռունկի նոր ենթատեսակ Հայաստանում

Մոխրագույն կռունկների խումբ

Մինչև այժմ աշխարհում հայտնի էր Մոխրագույն կռունկի երկու ենթատեսակ, որոնք միմյանցից տարբերվում են փետրածածկույթի գունավորմամբ և մարմնի չափերով: Հետաքրքրական է այն փաստը, որ Տիբեթում, Անդրկովկասում, այդ թվում նաև Հայաստանում բնակվող Մոխրագույն կռունկին վերագրում էին ասիական ենթատեսակին առանց որևէ լուրջ հիմնավորումների: 2008թ-ի գարնանը ռուս գիտնական Վ. Իլյաշենկոն, համատեղ Հայաստանի Թռչունների Պահպանման Միության մասնագետների և

Հարսանեկան խաղեր

Կենդանաբանության ինստիտուտի աշխատակիցների հետ սկսեցին ուսումնասիրել Հայաստանում բնադրող մի խումբ կռունկներին: Ուսումնասիրությունների արդյունքում պարզվեց, որ կռունկները մորֆոլոգիապես տարբերվում են Մոխրագույն կռունկի այն ենթատեսակից, որը նկարագրվել էր Հայաստանում որպես հանդիպող և բնադրող տեսակ: Այդ տարբերությունները ակնհայտ էին անգամ անզեն աչքի համար. նոր եթատեսակի մոտ բացակայում է գլխի վրայի կարմիր գունավորումը, աչքի ետնամասում առկա է սև նախշը, որը եզրագծում է աչքը, տարբերվում է նաև աչքի գունավորումը՝ այն վառ դեղին է: Ակնհայտ տարբերություններ կան նաև ձվերի նախշերի և ձագերի գունավորման ու չափերի միջև, ինչպես նաև մի շարք այլ տարբերություններ:

Մոխրագույն կռունկի մեկ օրեկան ձագ